ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 11 - Ա
31 հունվարի 2014 թ.

ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ <<ՈՉ ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅԱՆԸ>> ԽՈՐԱԳՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ <<ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ՁՄԵՌ – 2014>> ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.19-րդ կետերի պահանջներով

որոշում եմ՝

1. Հաստատել՝
   1) Առողջ ապրելակերպի շրջանակներում <<Ոչ թմրամոլությանը>> խորագրով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում Գեղարքունյաց ձմեռ- 2014 մարզամշակութային մասսայական միջոցառման կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N1 հավելվածի.
   2) Առողջ ապրելակերպի շրջանակներում <<Ոչ թմրամոլությանը>> խորագրով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում անցկացվող <<Գեղարքունյաց ձմեռ -2014>> մարզամշակութային մասսայական միջոցառման կանոնակարգը՝ համաձայն N2 հավելվածի:
2. Կազմկոմիտեին / նախագահ Գ. Բաղայան/ ՝
   1) ապահովել միջոցառումների անցկացման մասսայականությունը.
   2) միջոցառումների ավարտից հետո ներկայացնել գրավոր հաշվետվություն:
3. Սույն որոշման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Հակոբյանին
4. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N1
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2014 թվականի հունվար 31 -ի
N 11 - Ա որոշման

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ <<ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ՁՄԵՌ -2014 >> ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻ

Բաղալյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ /նախագահ/

Ասատրյան Ի. - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

Մելքոնյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության հարցերի վարչության պետ

Ստեփանյան Ռ. – մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի տեղակալ

Չարվադարյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի վարիչ

Շահբազյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ

Խլղաթյան Խ. - <<Գեղամա աշխարհ>> թերթի գլխավոր խմբագիր

Առաքելյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի առաջատար մասնագետ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N2
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2014 թվականի հունվար 31 -ի
N 11 - Ա որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ<<ՈՉ ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅԱՆԸ>>
ԽՈՐԱԳՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ <<ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ՁՄԵՌ – 2014>>
ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ

1. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մարզի համայնքներում ձմեռային մարզաձևերի և ազգային խաղերի մասսայականացում:

Ֆիզիկական կուլտուրան մատաղ սերնդի, երիտասարդության համակողմանի, ներդաշնակ դաստիարակությանը նպատակաուղղում:

Մարզի ազգաբնակչության առօրյայում առողջ ապրելակերպի արմատավորում:

Հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության դաստիարակության գործընթացի նպաստում:

2.ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՅՐԸ

<<Գեղարքունյաց ձմեռ -2014>> մարզամշակութային միջոցառումն անցկացվում է մարզի բոլոր համայնքներում՝ 2014 թվականի փետրվարի 7-17-ը ընկած ժամանակահատվածում:

3. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

- ✓ Մասսայական դահուկավազք, բարձունքի գրավում
- ✓ Մրցումներ սահնակներով և ազգային խաղաձևերից
- ✓ Պարանի ձգում
- ✓ 8 կգ և 16 կգ կշռաքարերի բարձրացում /ազատ ոճով /
- ✓ Մարզական ցուցադրական ելույթներ, սպորտային տարաբնույթ խաղեր
- ✓ Գեղարվեստական ինքնագործ համույթների ելույթներ
- ✓ Սպորտլանդիայի անցկացում և այլն;

4. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

Միջոցառման նախապատրաստման և անցկացման ղեկավարությունը իրականացնում են միջոցառման կազմակերպման և անցկացման կազմկոմիտեն և տվյալ համայնքի ղեկավարի աշխատակազմը՝ ուսումնական և մարզամշակութային հաստատությունների, հասարակական կազմակերպությունների աջակցությամբ:

5. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ

Զանգվածային լրատվական միջոցներով ապահովել <<Գեղարքունյաց ձմեռ - 2014>> մարզամշակութային միջոցառման հրապարակայնությունը : Միջոցառման ավարտից հետո մինչև ս/թ փետրվարի 24-ը մարզպետարան ներկայացնել միջոցառման վերաբերյալ տեղեկատվություն և տեսանյութեր:

6. ԾԱԽՍԵՐԸ

<<Գեղարքունյաց ձմեռ- 2014>> մարզամշակութային միջոցառման կազմակերպման և անցկացման հետ կապված ծախսերը հոգում են համայնքների ղեկավարները:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ